



**ՀԱՉԱՐԱՄՅԱԿԻ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ
ՀԻՄՆԱԳՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ**



**MILLENNIUM
CHALLENGE CORPORATION
UNITED STATES OF AMERICA**

Մամյո հաղորդագրություն

մայիսի 7, 2010

ԱՄՆ կառավարության կողմից ֆինանսավորվող ՀՄՀ-Հայաստան ծրագիրը ֆերմերներին ապահովում է ոռոգման ջրով և վերապատրաստում նրանց

Երևան, Հայաստան – Մայիսի 7-ին ԱՄՆ դեսպան Մարի Լ. Յովանովիչի և ՀՀ փոխվարչապետ Արմեն Գևորգյանի մասնակցությամբ ազդարարվեց Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ – Հայաստան (ՀՄՀ-Հայաստան) ծրագրի կողմից վերականգնվող 8,5 կիլոմետր ընդհանուր երկարություն ունեցող Այգեգարդի ինքնահոս համակարգի (Արարատի մարզ) 2,5 կիլոմետրանոց հատվածի բացումը: Ջրանցքի 1,4-րդ կիլոմետրի վրա է գտնվում ֆերմեր Աշոտ Աբրահամյանի հողակտորը, որտեղ էլ տեղի ունեցավ բացման արարողությունը: Աշոտ Աբրահամյանի ֆերման նաև ընտրված է որպես ՀՄՀ-Հայաստանի Ջրից դեպի շուկա բաղադրիչի 200-րդ ցուցադրական տեղամաս:

Դեսպան Յովանովիչը և փոխվարչապետ Արմեն Գևորգյանը ընդգծեցին ոռոգման ենթակառուցվածքների վերականգնման կարևորությունը գյուղատնտեսության վարման նոր փորձի փոխանցման տեսանկյունից՝ այդ թվում ոռոգման նոր տեխնոլոգիաների, բարձրարժեք գյուղատնտեսության ներկայացման և հայ ֆերմերների եկամուտների բաժնացման հարցերում: Նրանք կարևորեցին, որ ֆերմեր Աշոտ Աբրահամյանն իր 20 տարվա քրտնաջան աշխատանքի շնորհիվ պահպանել է իր 2 հեկտարանոց ծիրանի այգին՝ հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, այդ թվում՝ ոռոգման ջրի սակավությունը: Իսկ այժմ, օգտվելով ոռոգման բարելավումներից, նա կստանա ավելի շատ բերք և եկամուտ: Այգեգարդ, Գինեվետ և Նոր Ուղի համայնքների շուրջ 11 հազար գյուղաբնակներ նույնպես կօգտվեն Այգեգարդի ինքնահոս համակարգի վերականգնումից:

Պաշտոնական ելույթներից հետո Այգեգարդի ոռոգման ջրանցքով բաց թողնվեց ոռոգման ջուրը: Այնուհետև, մասնակիցները և հյուրերը հնարավորություն ունեցան շրջել ՀՄՀ-Հայաստան ծրագրի Ջրից դեպի շուկա բաղադրիչի շրջանակներում հիմնված 200-րդ ցուցադրական տեղամասում, որտեղ 1 հեկտարի վրա տեղադրվել է կաթիլային ոռոգման համակարգ:

Այգեգարդի ինքնահոս համակարգում կատարված ներդրումը ԱՄՆ կառավարության Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի (ՀՄԿ) և ՀՀ կառավարության միջև ստորագրված Համաձայնագրով (2006 թ.) Հայաստանի գյուղատնտեսության և ոռոգման ոլորտներին տրամադրվող 180 միլիոն ԱՄՆ դոլար ֆինանսավորման կարևորագույն մասն է: Մինչ ծրագրի ավարտը՝ 2011թ. սեպտեմբեր, ՀՄՀ-Հայաստան ծրագրով նախատեսվում է վերանորոգել Հայաստանի ոռոգման մայր ջրանցքների որոշ հատվածներ, մի շարք պոմպակայաններ, ոռոգման ինքնահոս համակարգեր, կառուցել նոր ներտնտեսային ջրանցքներ և վերականգնել Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի որոշ հատվածներ: Ծրագիրը նաև վերապատրաստում է շուրջ 45,000 ֆերմերի գյուղատնտեսության վարման առաջավոր փորձի ուղղությամբ, տեխնիկական օժանդակություն է տրամադրում ջուր մատակարարող ընկերություններին, ինչպես նաև 8,5 միլիոն դոլարի վարկ է տրամադրում ֆերմերներին և փոքր ագրոբիզնեսներին՝ ծրագրի նպատակներին համահունչ գործունեություն իրականացնելու համար:

Լրացուցիչ տեղեկատվության ստանալու համար խնդրում ենք այցելել՝ www.mca.am :

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար: